ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար դիզելային շարժիչի ինժեկտորի նորոգման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԳՀԾՁԲ-24/55 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-24/55 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2025 թվականի դեկտեմբերի 02-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ Պայմանագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 02-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ծառայության մատուցման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ Համաձայնագիր 2-ի Հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ Պայմանագիրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ծառայության մատուցման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման համար «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ**